

## ՄԱՐԳՈՒՍ ՇԱՏ ՀՈՂ Է ՀԱՐԿԱՒՈՐ.

### Ա.

Քաղաքից մեծ քոյրը փոքր քրոջ մօտ գիւղ է գալիս: Մեծ քոյրը քաղաքում վաճառականի հետ էր ամուսնացել, իսկ կրտսերը գիւղում՝ մի գիւղացու հետ: Քոյրերը թէյ են խմում իրար հետ, խօսքի բռնուում: Մեծ քոյրը սկսում է պարծենալ ու իւր քաղաքի կեանքը գովել, թէ ինչպէս նա քաղաքում աղսա և մաքուր ապրում է, ման է գալիս, ինչպէս դարդարում է իւր երեխաներին, ինչպէս քաղցրուենիք է ուտում և խմում, ինչպէս կառքով կամ ոտքով շրջում է ու զբօսնում և թաաքոն գնում:

Կրտսեր քոյրը վիրաւորուում է. նա էլ սկսում է իւր հերթին վաճառականի կեանքը նուաստացնել, իսկ իւր գեղջկականք բարձրացնել:

— Չեմ փոխի, ասում է, իմ կեանքը քոնի հետ: Թէ և անգոյն ենք անցկացնում օրներս, բայց քաշուելու բան չունինք: Ճիշտ է, դուք աւելի մաքուր էք ապրում, բայց ծայրահեղութեանց ենթակայ էք. կամ շատ էք շահուում, կամ բոլորովին սնանկանում էք: Առաին ասում է. հարստանալն ու աղքատանալն եղբայր են: Պատահում է, այսօրուայ հարուստը վաղը լուսամուաների առաջ մուրացկանութիւն է անում: Իսկ մեր գիւղական կեանքն աւելի հաստատուն է, գիւղացու կաշին հաստ է. թէ հարուստ չենք, հօ կ'ուշտ ենք:

Մեծ քոյրը պատասխանում է. — Կուշտ ո՞րն է. խողերն ու հորթերն էլ կուշտ են լինում: Չրկայ ոչ մաքրութիւն, ոչ մարդավարի կեանք, Ինչքան ուղում է թող մարդ չարչարուի, այդպէս աղբի մէջ էք ապրելու, մեռնելու, նոյնը և սրդիներդ: — Ի՞նչ անենք, ասում է կրտսերը, մեր գործն է այդպէս: Գորա փոխարէն էլ ապրուստի հաստատ աղբիւր ունենք, գլուխ չենք ծուում ոչ սրի առաջ, ոչ ոքից չենք վախենում: Իսկ դուք քաղաքում ենթակայ էք զանազան հրապոյրների. այսօր լաւ է, բայց վաղը բանն ուրիշ է դառնում: Մէկ էլ տեսնես, մարդուդ դայթակղեցնում է կամ թղթախաղը, կամ գինին, կամ սր և է գողութիւն: Եւ ամէն բան կորած է: Մի՞թէ այդպիսի դէպքեր չեն պատահում:

Տանտէր Պահոմը, վառարանի մօտ նստած, ականջ էր գնում կանանց դատարկարանութիւններին: «Ճշմարիտ է, ասում է իւր մտքում Պահոմը. ճշմարիտ որ վենք զիւղացիներս մանկութիւնից մայր հողի հետ գործ ունենալով, յիմար բաներ մը աղաներս չենք էլ բերում: Մի բանը վատ է—հողը քիչ է: Աւղածիս շափ թէ հող կունենայի, էլ ոչ ոքից, նոյն իսկ սասանայից չէի վախենալ:

Անանիքը թէյը վերջացրին, զարդարանքների մասին էլ զխըններից երկար ու բարակ դուրս տուին, աման—չաման հաւաքեցին, պառկեցին քնելու:

Իսկ սասանան, վառարանի ետեւում նստած, ամէն բան լսում էր: Նա ուրախացել էր, որ զիւղացու կինը իւր ամուսնուն զլուխը գովալու էր արամադրել: Պահոմը պարծեցել էր, որ եթէ նա որքան ուզում է հող ունենար, սասանան էլ նրան բան անել չէր կարող:—Վաւ, մտածում է սասանան, կը տեսնենք որս կը տանի. ես շատ հող կը տամ քեզ, հողով էլ քեզ կը յաղթեմ:

Բ.

Գիւղացիների կողքին ապրում էր մի շատ հարուստ տիկին: Նա 120 դեսեստին հող ունէր: Առաջ գիւղացիների հետ լսազազ էր ապրում—չէր վիրաւորում նրանց: Այդ ժամանակ պաշտօնաթող մի զինուոր նրա մօտ գործակատար մտաւ և սկսեց գիւղացիներին տուգանքի ենթարկել: Պահոմը որքան աշխատում էր, դարձեալ չէր ազատում տուգանքից, որովհետեւ կամ նորս կովն էր տիկնոջ պարտէզն ընկնում, ձին գարին արածում, կամ հորթը մարգագետինը մօնում: Ամէն անգամ տուգանք էր վճարում խեղճ Պահոմը:

Պահոմը տուգանքը վճարում էր, և անեցւոց հայհոյում կամ ծեծում: Ամառն այդ գործակատարի երեսից Պահոմը շատ անգամ յանցանքի մէջ ընկաւ: Աճուեց անասուններին սանը թողնել. թէև արտոս էր դալիս կերին (լոտս էմ), բայց գոնէ վախենալու պատճառ չէր ունենայ:

Չմեռը լուր պատեց, որ տիկինը ծախում է հողը և մեծ ճանապարհի կողմի դռնապանը կամենում է այն գնել: Գիւղացիք լսեցին—ախ քաշեցին: «Է, մտածում են, հողը դըռ-

նապանի ձեռքն է ընկնելու, տիկնոջից աւելի է աուգանքնե-  
րով տանջելու: Առանց այդ հողի մենք չենք կարող ապրել, բոլորս  
էլ նորա շուրջն ենք բնակուած: Գիւղացիք հասարակութիւնով  
եկան տիկնոջ մօտ, սկսեցին խնդրել, որպէս զի հողը դանապանին  
չը ծախէ, այլ իրենց տայ: Խոտանում էին աւելի վճարել:  
Տիկնոջ համաձայնեց: Գիւղացիք սկսեցին համախօտական կազմել,  
ամբողջ հասարակութիւնով գնել, մի անգամ, երկու անգամ  
ժողով կազմեցին—գործը դուրս չեկաւ: Ստանան խոտնակու-  
թիւն էր ձգում, ոչ մի կերպ համաձայնութեան չէին գալիս:  
Գիւղացիք սրոշեցին՝ առանձին առանձին, ով սրբան միջոց ունի,  
գնել: Տիկնոջ դորան էլ համաձայնեց: Պահումի ականջն ընկաւ, սը  
հարեանը տիկնոջից 20 դետետառին արդէն գնել է, և տիկնոջ դրա-  
մի կէս վճարը մի տարով յեւածագել է: Պահումը սկսում է նա-  
խանձել. «Ամբողջ հողը խլխլելու են, մտածում է, ես դասար-  
կաձեռն եմ մնալու»: Կնոջ հետ խորհրդի է մտնում:

— Աւրիշները գնում են, հարկաւոր է, առում է, մենք էլ  
մի տասը դետետառինի չափ գնենք: Թէ չէ ապրել անհնար է, գոր-  
ծակատարը աուգանքներով խեղդեց:

Մտածեցին, ինչպէ՞ս գնեն: Մի հարիւր բուրլու չափ հողե-  
պահուստ ունեին, քուռակը ծախեցին, մեղուների կէսը, սրգուն  
էլ իբրև մշակ դրաւ դրին, մի բան յետոյ քենակալից վերցրեց,  
և դրամի կէսը դուրս եկաւ:

Պահումը դրստեց փողերը, ընտրեց հողը, 15 դետետառին ան-  
տառակով, և տիկնոջ մօտ դնաց սակարկելու: 15 դետետառինի  
գինը կտրեց, ձեռք ձեռքի խփեցին, և դրաւական ներկայացրեց:  
Քաղաք գնացին, կալուածագիր կազմեցին, դրամի կէսը վճարեց,  
պարտաւորուեց մնացածն էլ երկու տարում տալ:

Պահումը հողի տէր դարձաւ: Սերմեր ձեռք ընրեց, գնած  
հողը ցանեց, լաւ բուսաւ: Մի տարուայ մէջ տիկնոջ պարտքն էլ  
վճարեց, քենակալինն էլ: Պահումը կալուածատէր էր դարձել:  
Իւր հողն էր հերկում և ցանում, իւր հողի խոտն էր քաղում, իւր  
հողի վերայ գանուած արմատները կտրում և իւր հողի վերայ  
անասուն պահում: Պահումը դուրս է գալիս իւր սեպհական հողը  
մշակելու, կամ մարգագետինները նայելու—չի ուրախանում:  
Թուում է նրան, որ խոտը, ասենք, աճում է, բայց նրա վերայի  
ճաղիկները ծաղկում են ըողորովին ուրիշ կերպ: Պատահում էր,  
անցնում էր այդ հողով—հողին բան չուներ ասելու, հող էր,  
բայց այժմ ըողորովին ուրիշ բան էր դարձել:

Գ.

Պահոմը այդպէս ապրում է, և դո՛ւ է: Ամէն բան կարգի կրննիւնէր, միայն թէ զիւղացիք սկսել էին Պահոմի հացարոյսերն ու մարդագետիւնները կերցնել: Պատուաւոր կերպով խնդրեց, ըստ անօգուտ դուրս եկաւ, չը զսպուեցին. երբեմն հօտաղներն էին եղները Պահոմի մարգագետիւններում արածեցնում, երբեմն զիշեր ժամանակ ձիերը ցորնի արտերի մէջ թողնում: Միշտ դուրս էր անում անասուններին, և բանի տեղ չէր դնում, դատաստանի չէր դիմում. ապա ձանձրացաւ, սկսեց զիւղական գատարանին դանդատուել: Թէև իմանում էր, որ նեղուածքութիւնից են այդպէս անում զիւղացիք, ո՛չ թէ չարամտութեամբ, ըստ մտածում է. «Ի՛նչ չի կարելի հօ ձեռքից տալ. այդպէս շարունակելով, նոքա բոլորը կը կերցնեն: Պէտք է խրատել»:

Այդպէս դատաստանի միջոցով մի երկու անգամ մէկին, միւսին տուգանքի ենթարկեց: Գիւղացիք, հարևանները սկսեցին սրտամնայ լինել Պահոմից. այս անգամ արդէն զիտամաք էլ վնասում էին: Նոցանից մէկը զիշեր ժամանակ անտառակը մտաւ, տասի չափ լօրենիներ կեղևահան արաւ. Պահոմը անտառով անցնում էր, տեսնում է, ի՛նչ որ սպիտակին է տալիս: Փօռեցաւ, կեղևները ցրուած ընկած են, կոճղները ցցուած: Գէթ անտառի ծայրերինը կտրէր, մէկը թողնէր, թէ չէ անպիտանը հերթով բոլորը փչացրել է: Պահոմը չարացաւ: «Ա՛խ, մտածում է, մի իմանայի, անողն ո՛վ է եղել. ես գիտէի, նրան ինչ ցոյց կը տայի»: Մտածեց, մտածեց, թէ ո՛վ կարող էր անել. «Նի ոչ ոք, Սիմոնից զաս»: Սիմոնի բակը գնաց մի նշան փնտռելու, ոչինչ չը գտաւ, միայն հայոյեցին միմեանց: Պահոմն աւելի ևս համոզուեց, որ Սիմոնի արածն է: Գանդատ տուեց: Դատաստանի կանչեցին: Դատաւորները խորհեցին, խորհեցին—զիւղացուն արգարացրին. փաստեր չը կային: Պահոմն աւելի ևս վերաւորուեց. անուռտէրի և դատաւորների հետ կռուեց: «Դուք, ասում է, գողեր էք պահում: Եթէ ինքներդ լաւ մարդիկ լինէիք, գողերին չէիք արգարացնի»: Պահոմն ընկաւ թէ դատաւորների և թէ հարևանների հետ: Սկսեցին նրան սպառնալիքներ տալ: Պահոմն այնուհետև որչափ իր հողում ազատ էր ապրում, աշխարհում ճնշուած էր: Այդ ժամանակ լուրեր պտտեցին, թէ ժողովրդից ոմանք նոր տեղեր են անցնում, Պահոմը մտածում է. «Ես-կապէս ասած, ես կարիք չունիմ իմ հողիցս հեռանալու»:

այ եթէ մերոնցից մէկն ու մէկը գնալու լինէր, մեր տեղը կը լայնանար: Նրա հողը ես կը վերցնէի իմ վերայ, շուրջազննդարձակէի, ապրուստս աւելի կը լաւացնէի: Թէ չէ սաստիկ նեղուածք է:

Պահոմը մի անգամ տանը նստած էր. մտնում է նրա մօտ մի ճամբորդ գիւղացի: Գիւղացուն գիշերելու տեղ տուին, կերակրեցին, միմեանց հետ խօսքի բռնուեցին.— Յառաջ բարի, հարցրեց Պահոմը: Գիւղացին ասում է, որ ցածից, Ասլղի այն երեսից է գալիս. այնտեղ մշակութիւն էր անում: Խօսք խօսքի ետեւից, գիւղացին հետզհետեւ պատմում է, թէ ինչպէս է ժողովուրդն այդտեղ նոր բնակութիւններ հաստատում: Պատմում է, որ այնտեղ բնակուեցին իւր հայրենակիցներէրց ոմանք, հասարակութեան անգամ գրուեցին, և մարդ գլուխ 10 գեսեատին հողաբաժին ստացան: Իսկ, ասում է, հողն այնքան պարարտ է, որ ցանած հաճաքը ցորենի նման էր բարձրացել,— ձին մէջը կորչում էր, և այնքան խիտ, որ հինգ փունջը մի խուրձ էր կազմում: Մէկ գիւղացի, պատմում է ճամբորդը, բոլորովին աղքատ, ձեռքերը թափ տալով եկաւ, բայց այժմ վեց ձիու և երկու կովի տէր է դարձել:

Պահոմի սիրտը թնդացւոյ Մտածում է. ինչու այս նեղուածք տեղում աղքատ ապրեմ, եթէ լաւ ապրելու հնարաւորութիւն կայ: Ծախեմ հողս էլ, ունեցած—չունեցածս էլ. այդ փողերով ես այնտեղ կարգի կը դնեմ գործերս, տուն ու տեղ կը հիմնեմ: Իսկ այստեղ, այս նեղ դրութեան մէջ, աշխատանք անելն էլ մեզք է: Միայն նախապէս մի իմանամ բանն ինչումն է:

Պատրաստուեց ամառը, գնաց: Հոգեհարկով Ասլղայի վերայ նաւելով հասաւ Սամարա, ապա ստքով գնաց 400 վերստ, նշանակած տեղը հասաւ: Ամէն բան պատմածի նման էր: Գիւղացիք ազատօրէն ապրում են, ամէն մէկին 10 գեսեատին հողաբաժին է տրուած, և սիրով են ընդունում իրանց հասարակութեան մէջ: Իսկ եթէ մէկը փող էլ ունի, բացի հողաբաժնից, իբրև յաւիտենական սեպհականութիւն, որքան կամենայ կարող է գնել ամենալաւ հողի գեսեատինը 3 ըուրլիով. որքան կամենաս, կարելի է ձեռք բերել:

Պահոմն ամէն բան տեղն ու տեղը իմացաւ, աշնան գէմ վերադարձաւ տուն, սկսեց ամէն ինչ ծախել: Ծախեց օգուտով իւր հողը, ծախեց անասնեղէնները, անտեսութեան վերաբերեալ բոլոր իրերը, հասարակութիւնից դուրս եկաւ, մինչև գարուն մնաց և ընտանիքն առած նոր տեղերը գնաց:

## Գ.

Պահոմը ընտանիքով նոր տեղերն եկաւ, մի մեծ գիւղի հասարակութեան անդամ գրուեց: Ծերունիներին խմացրեց, անհրաժեշտ թղթերը կարգի դրեց: Պահոմին ընդունեցին, զանազան դաշտերում 5 հոգու համար 50 դեսետաին հողաբաժին տուին, բացի արօտատեղը: Պահոմը սարքուեց, սկսեց անասնեղէն պահել: Նրա այժմուայ իւրաքանչիւր հոգու հողաբաժինը առաջուանից երեք անգամ աւելի էր, հողը արդաւանդ: Պենցադավարութիւնը նախկինի համեմատութեամբ տասն անգամ աւելի լաւ էր: Վարելահող և արօտի տեղ որքան կամենաս: Իսկ անասուն որքան սիրագ կուզի պահիր:

Սկզբում, քանի որ նոր էր կարգի ընկնում և տեղաւորում, Պահոմին լաւ էր թուում. հէնց որ բնակուեց այդ հողի վերայ, էլի նեղուածք զգաց: Պահոմը հողաբաժնում առաջին անգամ ցորեն ցանեց, բերքը լաւ դուրս եկաւ: Ախորժակը շարժուեց նորից ցորեն ցանելու, բայց հողաբաժինը չէր բաւականացնում: Իսկ եղածն էլ անպէտք էր: Այն երկրում ցորենը ցելած հողում են ցանում: Յանում են մի, երկու տարի, ապա անմշակ թողնում, մինչև նորից կը պարարտանայ հողը: Այդպիսի հողի էլ ուզողները շատ են լինում, ամէնքին չի բաւականացնում: Ահա այդ տեսակ պարկած հող ձեռք բերելու համար յաճախ կուիւններ էին լինում. աւելի հարուստները իրենք են կամենում ցանել, իսկ աղքատները հարկերի պատճառով վաճառականներին են յանձնում իրենց հողը: Պահոմը ուզեց աւելի ցանել: Միւս տարին մի վաճառականի մօտ գնաց, մի տարով հող վերցրեց: Աւելի ցանեց—բերքը լաւ դուրս եկաւ, բայց գիւղից հեռու էր ընկած, հարկաւոր էր 15 վերստից կրել: Տեսնում է, շրջակայքում վաճառական—գիւղացիք ազարակներում են ապրում, հարստանում են:—«Ա՛յ, վատ չէր լինիլ, մտածում է Պահոմը, եթէ ետ էլ յաւիտենական սեպհական հող գնէի, ազարակ չիսէի: Ամէն բան մօտ կը լինէր»: Եւ Պահոմը սկսեց մտածել, ինչպէ՞ս յաջողեցնի սեպհական հող գնելը:

Այդպէս ապրեց Պահոմը երեք տարի: Հող էր վերցնում, ցորեն ցանում: Տարիները յաջող էին դուրս գալիս, ցորնի բերքը լաւ էր լինում, և Պահոմի գրպանում աւելի դրամներ երևացին: Ապրելուն ապրում էր, բայց ձանձրալի էր թուում Պահոմին իւրաքանչիւր տարի ուրիշների մօտ գնալ, հող գնել, հողի երեսից

աստանդական լինելը, Հէնց որ մի տեղ լաւ հողի կտոր է երևում, գիւղացիք խսկոյն վրայ են թափուում, միմեանց ձեռքից խլխլում, եթէ միջոց չունեցաւ ժամանակին ձեռք բերելու, ցանելու էլ տեղ չի ունենալ: Այգպէս երրորդ տարին վաճառականի հետ կխոսի գնեց գիւղացիների արօտատեղը, հերկում էին արդէն, մէկ էլ տեսնես փոշմանեցին, պայմանները քանդեցին, որով ամէն աշխատութիւն կորաւ: — Թէ իմ հողս կը լինէր, մտածում է Պահոմը, ոչ ոքի առաջ գլուխ չէի ծռի, և յանցանք էլ չէի ունենալ»:

Պահոմն սկսեց գէս ու գէն ընկնել տեղեկանալու, որտեղ կարող է սեպհական հող գտնել: Եւ մի գիւղացու հանդիպեց, Գիւղացին 500 գեսեատին գնել էր, յանկարծ սնանկանում է և արժան գնով ծախում: Պահոմը սկսեց նրա հետ բանադնացութեան մէջ մտնել: Այս կողմից, այն կողմից զիջելով—1500 ռուբլու վերայ կանդ են առնում, միայն դրամի կէսը յետոյ տալու պայմանով: Գործն արդէն բոլորովին վերջացած էր, մէկ էլ տեսնես Պահոմի բակն է մտնում մի ճամբորդ վաճառական: Եկուորին կերակրում են, թէյ տալիս, խօսում: Վաճառականը պատմում է, որ հեռաւոր բաշկիրցիների երկրից է գալիս: Այնտեղ, ասում է, մօտ հինդ հազար գեսեատին հող է գնել, որը նորան նստել է ընդամէնը հազար ռուբլի: Պահոմը հետաքրքրուեց, հարց ու փորձ արաւ: Վաճառականը պատմեց:— Միայն, ասում է, ծերունիներին մի կերպ դոհացրի, 100 ռուբլու կապացու, կտորներ բաժանեցի, մի հակ էլ թէյ, խսկ խմորներին գինի վայելել տուի: Եւ գեսեատինը 20 կոպէկով վերցրի»: Վալուածագիրն էլ ցոյց է տալիս: «Գնած տեղս, ասում է, գետակի ափին է ընկած, ամբողջ տափաստանը պարարտ հող է ու խամ», Պահոմը սկսեց հարց ու փորձ անել, ինչպէս և ինչ տեսակ, «Այնտեղի հողը, շարունակում է վաճառականը, ծայր չունի, նրա շուրջը մի տարումն էլ չես կարող պտակաբոլորը բաշկիրցուցն է: Ժողովուրդը ոչխարի նման յիմար է: Համարեա ձրի կերպով կարելի է վերցնել»: — «Է, մտածում է Պահոմը, ինչու 1500 ռուբլի վճարեմ 500 գեսեատին հողի համար, դեռ պարտքն էլ վիզս փաթաթեմ: Իսկ այնտեղ 1000 ռուբլով ինչքան հողի կը տիրանամ»:

## Ե.

Պահամը հարց ու փորձ արաւ, թէ ինչպէ՞ս դնայ, և հէնց որ վաճառականին ճանապարհ դրեց, ինքն էլ պատրաստուեց գնալու: Տունը կնոջ յուսով թողեց, ինքը պատրաստութիւն տեսաւ և ծառայի հետ գնաց: Գնացին քաղաք, մի հակ թէյ դնեցին, վերցրին զանազան ընծաներ, գինի, ինչպէս որ վաճառականն էր արել: Գնացին, գնացին, մօտ 500 վերստ գնացին: Խօթներորդօրը հասան քաշկերցոց վրաններին: Ամէն բան վաճառականի ատածի նման էր: Ամէնքն էլ տափաստաններում են ապրում, գետակի տփին, թաղերէ վրաններում (կիրիտականերում): Իրենք երկրագործութեամբ չեն պարապում և հաց էլ չեն դործ ածում: Գաշտերում պտտում են անասունները և մի մի փայտի կտորոտներին կապած ձիաները: Վրանների (կիրիտակաների) ետևում կապուած են ըուռակները, և օրը երկու անգամ նոցա մօտ են թողնում մայրերին. մատակ ձիու կաթը կթում են, և նրանից կումիս պատրաստում: Պանայք կումիսը շարժելով պանիր են շինում, խօկ տղամարդիկ միայն իմանում են—կումիս և թէյ լամել, ոչխարի միս ուտել և սրնգի վերայ ածել: Ամէնքն էլ տափակ ուրախ մարդիկ են, ամբողջ ամառը պարապ ժամանակ են անցնում: Բոլորովին խաւար տոգէտ ժողովուրդ են և ռուսերէն չեն իմանում, քայց հիւրասէր են:

Հէնց որ Պահամին տեսան, մէկը միւսի ետևից քաշկերցիք դուրս եկան կիրիտականերից, ամէն կողմից հիւրին շրջապատեցին: Թարգման էլ գտնուեց: Պահամը նրան ասաց, որ հողի համար է եկել: Բաշկերցիք ուրախացան, քաշ տուին Պահամին, մի լաւ կիրիտիա տարան, գորգի վերայ ըսգմեցրին, տակը բմբէլ քարձեր դրին, նստեցին շուրջը, սկսեցին թէյով, կումիսով հիւրասիրել: Ոչխար մսթեցին և նրա մտով Պահամին կերակրեցին: Պահամը տարանտասի վրայից վերցրեց ընծաները, սկսեց քաշկերցոց ընծայել: Այդպէս բոլորին ընծաներ տուեց և թէյը բաժանեց: Բաշկերցիք ուրախացան: Մթմթացին մրմեանց մէջ, մրթմրթացին, ապա թարգմանին հրամայեցին ասել.

— Հրամայում են ասել քեզ, սկսում է թարգմանը, որ դու դիւր ես եկել նրանց, քաշկերցիք սիրեցին քեզ, խօկ մենք մի այսպիսի սովորութիւն ունենք—հիւրին ամէն տեսակ բաւականութիւն տալ և տուած ընծաների փոխարէն շնորհակալ անել: Դու մեզ պարգևներ շնորհեցիր, այժմ ասա՛, մեր երկրում ինչն

է քեզ դիւր դալիս, ի՞նչ ես սիրում, որպէսզի քեզ տանք:

— Ինձ դիւր է եկել, ասում է Պահոմը, ամէնից աւելի ձեր հողը: Մեր երկրում, ասում է, հողի նեղութիւն կայ, իսկ դուք հող շատ ունէք և ձեր հողն էլ լաւն է: Այդպիսի հող ես կեանքումս չէի տեսած:

— Թարգմանը հաղորդեց: Բաշկիրցիք նորից խօսեցին, խօսեցին: Պահոմը չի հասկանում, ինչ են ասում, միայն նկատում է, որ ուրախ են, ինչ որ գորգոռում են և ծիծաղում. Ապա հանդարտեցին, Պահոմի վերայ են նայում, իսկ Թարգմանը խօսում է: Հրամայում են, ասում է Թարգմանը, քեզ ասել, որ քո արած բարիքի փոխարէն, պատրաստ են քեզ, որքան կամենաս, հող տալ: Միայն ձեռքի շարժումով ցոյց տուր որ կողմը,— քոնը կը լինի:

Մի քիչ էլ խօսեցին, ինչ որ պատճառով վէճի բռնուեցին: Թարգմանը բացատրեց. ոմանք ասում են, թէ հողի մասին որ և է կարգադրութիւն անելուց առաջ պէտք է ամնուտէրին հարցնել, և առանց նորան անկարելի է: Իսկ ոմանք էլ ասում են— առանց նորան էլ եօլայ կերթայ:

## 2.

Բաշկիրցիք վիճում են, յանկարծ ազուէսի փախախով մէկը մօտեցաւ: Բոլորը լռեցին և կանգնեցին: Թարգմանն ասում է. այդ ինքը ամնուտէրն է: Պահոմը անմիջապէս դռնում է ամենալաւ կապացուն և ամնուտէրին մատուցանում, հետն էլ 5 դրվանքայ թէյ:— Տանուտէրն ընծաները ընդունում է և նստում առաջին տեղը: Բաշկիրցիք իսկոյն սկսում են ինչ որ քանեք ասել նորան: Տանուտէրը լսում է, լսում, գլխով նշան է անում, որ նորա լռեն, և սկսում է Պահոմին ռուսերէն ասել:

— Ոչինչ, ասում է ամնուտէրը, կարելի է: Աերցրու, սրտեզ սիրտդ ուզում է: Հողը շատ է:

«Ինչպէս ես կարող եմ, որքան կամենամ վերցնեմ, մատածում է Պահոմը: Դէ հարկաւոր է, ինչ ուզում է լինի հառտատել: Թէ չէ կասեն քոնն է, իսկ յետոյ կը խլեն»:

— Հատ շնորհակալ ենք, ասում է Պահոմը, ձեր բարեա-

ցահամութեան համար: Գիտեմ որ դուք հող շատ ունէք, բայց ինձ քիչ է հարկաւոր: Ինձ միայն հետաքրքրում է իմանալ, որ մասն է իմը լինելու: Հարկաւոր է հօ մի կերպ չափել և իմ անունով հաստատել: Թէ չէ մարդուս կեանքը Աստուծոյ ձեռքն է: Այսօր կանք, վաղը ոչ: Գուք բարի մարդիկ էք, տալիս էք, բայց կը գայ ժամանակ՝ ձեր որդիքը կը խլեն:

— Ճիշտ ես ասում, հաւանութիւն է տալիս Պահոմի ասածին տանուտէրը, հաստատելը դժուար բան չէ:

Պահոմը շարունակեց.— Այ օրինակ, ես լսեցի, ձեր մօտ մի վաճառական է եղել Նրան էլ էք դուք հողի կտոր պարգևել, պայմանադիր կազմել. նոյնը ես կուզէի:

Տանուտէրը ամէն բան հասկացաւ:

— Այդ ըստը կարելի է, ասում է: Մենք դրազիր էլ ունենք, քաղաք էլ կը գնանք և ըստը անհրաժեշտ թղթերն էլ կը կնքենք:

— Հապա գինն ի՞նչ է լինելու, հարցնում է Պահոմը:

— Մեր երկրում հողի գինը յայտնի է. օրը 1000 բուբլի:

Պահոմը չհասկացաւ.— Այդ օր ասած բանը ի՞նչ չափ է, որքան դեսնաւին է տանում:

— Մենք այդ ասում է տանուտէրը, չենք կարող հաշուել: Միայն մենք հողը օրով ենք ծախում. մի օրում որքան մեծ շրջան անես, քեզ լինի, իսկ օրուայ գինը 1000 բուբլի է:

Պահոմը զարմացաւ.— Ախր այդպէս չի կարելի, ասում է Պահոմը, մի օրում շատ մեծ շրջան կարելի է անել:

Տանուտէրը ժպտաց.— Բոլորը քանք կը լինի: Միայն մի պայման ունենք. եթէ մի օրում յետ չեկար այնտեղ, որտեղից վերցնես,— փողերդ կորչելու են:

— Ի՞նչպէս նշան տնեմ, ասում է Պահոմը, թէ որտեղով եմ անցել:

— Մենք կը մնանք քո բնորոշ տեղում. որտեղ սիրտդ կամենայ, մենք կը կանգնենք: Իսկ դու գնա՛, շրջան արա. հետդ բաճ վերցրու և որտեղ հարկաւոր կը լինի նշան արա. անկիւններում փոս փորիր, չմեր դիր, յետոյ մի փոսից միւսը գութան կանցկացնենք: Ինչ շրջան ուզում ես, արան միայն մինչև արեւի մայր մտնելը արի՛ այնտեղ, որտեղից սկսել ես: Ինչքան անցնես — ըստը քանք:

Պահոմը ուրախացաւ: Որոշեցին առաւօտը վաղ վեր կենալ: Գատարկաբանութիւններ արին, երկար ու բարակ գլխներից դուրս քուլին, մի քիչ կուժիս լամպիկն, ոչխարի միս կերան, մի անգամ էլ թէյ լամպիկն: Գիշեր դարձաւ: Պահոմին բմբլէ անկողնի մէջ

պարկեցրին, և բաշկիրցեց ցրուեցին: Խօսք տուին միւս օրը արշալոյսին հաւաքուելի մինչև արեգակի ծագելը նշանակած ակազը հասնել,

## Է.

Պահոմը պարկեց բմբուէ անկողնի մէջ, բայց քունը չէր տանում, ուշ ու միտքը հողով էր դրուած:

«Կը թրցնեմ, մտածում է, մեծ կտոր: Մի օրուայ մէջ 50 վերստ կը պատեմ: Այժմ տարի է օրը: 50 վերստի մէջ հող կը լինի հա: Արը մի քիչ վատ կը լինի, կարող եմ ծախել, կամ գիւղացուց վերայ թողնել, իսկ լաւ կտորը կընարեմ և նրա վերայ բնակութիւնս կը հաստատեմ: Լծկաններ կը պահեմ երկու գութան դուրս բերելու համար, երկու մշակ կը վարձեմ, 50 դեսեատինի շափ կը հերկեմ, իսկ մ'նացածի վերայ անասուններս կը թռչկատան»:

Ամբողջ գիշեր Պահոմը աչք չը կպցրեց: Արշալուսից առաջ միայն թմրութիւն եկաւ վրան: Թմրութեան մէջ ընկնելու երազ տեսնելը մէկ եղաւ: Տեսնում է, որպէս թէ հէնց այն կիրևահայի տակ էլ պարկած է, և լսում է, որ դրսում մէկը բարձրաձայն կչկչալով ծիծաղում է: Արպէս թէ ապացանկացաւ տեսնել, սվ է այդպէս ծիծաղողը, վեր կացաւ, կիրևտիայից դուրս եկաւ ու տեսնում է,—կիրևտիայի առաջ նստել է նոյն այն բաշկիրցուց տանուակերը, երկու ձեռքով բռնել է վորը, օրօրում ու ինչ որ բանի վերայ ծիծաղում է:—Պահոմը մօտեցաւ և հարցրեց. «Ինչո՞ւ ես ծիծաղում: Եւ նկատում է, որպէս թէ, դա ոչ թէ բաշկիրցուց տանուակերն է, այլ այն վաճառահանը, որ այդ քանի օրը նրանց մօտ էր վեր եկել, հողի մօտին պատեմ: Պարձաւ վաճառահանին հարցրեց միայն. «Վաղո՞ւց է դու այստեղ ես»: Բայց արդէն դա վաճառահանը չէր, այլ այն գիւղացին, որ հին ժամանակ ցածից եկել էր: Պահոմը տեսնում է որպէս թէ, դա ոչ էլ գիւղացին է, այլ ինքը սատանան է եղջիւրներով և սմբակներով, նստած կչկչում է, իսկ նրա առաջ պարկած է մետակ շապիկ հողին, ոտաբոբիկ մի մարդ: Առաջաւ Պահոմը, աւելի ուշագիւր կերպով նայեց՝ իմանալու համար թէ ինչ մարդ է պարկողը: Եւ տեսնում է, որ մարդը մեռած

է և որ նա ինքը Պահոմն էր: Պահոմը դարհուրեց և զարթնեց: Չարթնեց,— «Ի՛նչ երազներ եմ տեսնում», մտածում է: Նայեց, բաց դռնից տեսաւ, որ սպիտակին է տալիս, սկսում է լուսանալ: «Հարկաւոր է, մտածում է Պահոմը, բաշկիրցւոց զարթեցնել, գնալու ժամանակն է»: Պահոմը վերկացաւ, տարանտառում պարկած ծառային զարթեցրեց, հրամայեց ձիաները լծել, և զնաց միւսներին զարթեցնելու: — «Ժամանակն է, ասում է Պահոմը, դաշտ գնալ, չափել»: Մէկը միւսի ետեւից վերկացան բաշկիրցիք, ամէները հաւաքուեցին, տանուտէրն էլ եկաւ: Բաշկիրցիք նորից սկսեցին կռւմիս խմել, ցանկացան Պահոմին էլ թէյով հիւրասիրել, բայց նա չը համբերեց: «Եթէ գնալու ենք, գնա՛ք, ասում է Պահոմը, ժամանակն է»:

Ը.

Բաշկիրցիք հաւաքուեցին, ով ձի ունէր նստեց, իսկ միւսները տարանտառների մէջ տեղաւորուեցին, ճանապարհ ընկան: Պահոմն էլ ծառայի հետ իւր տարանտասը նստեց, հետները բահ վերցրին: Դաշտ հասան, արշալոյս էր: Բարձրացան մի քլրակի—բաշկիրցւոց լեզուով շիխանի՝ վերայ: Տարանտառներից դուրս թափուեցին, ձիաներից իջան, կիտուեցին միմեանց գլխի: Տանուտէրը մօտեցաւ Պահոմին, ձեռքով ցոյց տուեց:

— Ահաւասիկ, ասում է, բոլորը՝ մերն է, ինչ որ աչքդ կտրի: Ընտրելը սրտիդ ուզած կտորը:

Պահոմի աչքերը վառուեցին. տեսնում է, որ ամբողջ հողը պարարտ, պարկած, ձեռքի ասիւ նման հարթ, կակաչի նման սև, իսկ փոս տեղերն էլ—այնպէս սիզաւէտ է, որ խոտը մինչև մարդի կուրծքն է անցնում:

Տանուտէրը աղուէսի գլխարկը հանեց, ցած դրեց:

— Ա՛յ, ասում է, թող սա նշան լինի: Այստեղից գնա՛, այստեղ արի: Ինչ շրջան անես—քոնը լինի:

Պահոմը փողերը հանեց, գլխարկի վերայ դրեց. կապէն հանեց, մնաց մի բաճկոնով, գօտին փորի տակով լաւ պնդացրեց, ձողուեց, հացի պարկը թևի տակ դրեց, ջրի փոքրիկ դաւը գօտիկից կախեց, քաշեց ծուղիքը, ծառայի ձեռքից առաւ բահը, ճանապարհ ընկաւ: Մտածեց, մտածեց, ո՞ր կողմը բռնի—բոլորը լաւ է: Մտածում

է՛ մի և նոյն է՛, գնամ դէպի արևելքս Երեոր դէպի արևն արաւ, ճլրքոտաց, սպասում է, մինչև որ երկրի այն երեսից կերևար: Մտածում է—չեմ բաց թողնի ոչ մի բոպէ: Հովին գնալն աւելի հեշտ է: Հէնց որ ծածկուած տեղից սվառուեցին արեգակի առաջին ճառագայթները, Պահոմը բահը ուսը գրեց, ընկաւ ճանապարհ դէպի հարթ տափաստանները:

Պահոմը գնում էր ոչ շատ հանդարտ, ոչ էլ շտապ, այլ միջակ քայլերով: Մի վերստաչափ անցաւ. կանգ առաւ, փոս փորեց և դուրս եկած կոշտերը միմեանց վերայ դրեց: որ նշանը աւելի նկատելի լինէր: Գնաց, գնաց, սկսեց ճմլկոտալ, քայլերն արագացնել: Դարձեալ բաւական անցաւ, էլի փոս փորեց, ուրիշ փոս արաւ:

Պահոմը յետ նայեց: Արեգակի լուսով շխտանք լաւ էր երեւում, ժողովուրդը կանգնած էր, տարանտասների ակների օղերը փայլում էին: Պահոմը ենթադրում է, որ հինգ վերստաչափ անցած կը լինի: Մարմինը տաքանալ սկսեց, բաճկոնակն էլ հանեց, ուսերին ձգեց, շարունակեց ճանապարհը: Հօգն ընկաւ: Արևին նայեց,—արդէն նախաճաշի ժամանակն էր:

«Մի շունչն անցած է, մտածում է Պահոմը, իսկ օրը չորս շունչ ունի, դեռ շուտ է թեքուելուն: Արի մի բողկանամ»: Կանգ առաւ, մի քիչ աւելի մեծ փոս արաւ, չմերը միմեանց վերայ դրեց, գաւն արձակեց, ծարաւը հագեցրեց և ուղիղ դէպի ձախ դարձաւ: Գնաց, գնաց, սկսուեց քարձը խոտը, սաստիկ շոգեց:

Պահոմը կամաց կամաց յոգնածութիւն զգաց. արևին նայեց, տեսնում է՝ ուղիղ կէսօր է:—Ե՛, մտածում է, հարկաւոր է հանգստանալ»: Պահոմը կանգ առաւ, նստեց: Մի քիչ հաց կերաւ: Չուր խմեց, բայց շուղեց պարկել. մտածում է—ես դիտեմ, պարկելս ու քնելս մէկ կը լինի: Մի քիչ ժամանակ նստեց, ապա ճանապարհը շարունակեց: Սկզբում լաւ էր գնում, թեթե քայլով էր շարժուում: Աերակրից ուժերն աւելացել էին: Ահա սկսեց սաստիկ շոգել, քունն էլ տանում էր, սակայն անդադար դընում է, մտածում. համբերութիւնը կեանք է:

Դարձեալ շարունակեց այդ կողմով առաջ գնալ, կամեցաւ արդէն ձախ թեքուել, բայց տեսնում է—ջրաբլի հովիտ. արիստում է թողնելը: Մտածում է՝ այդտեղ կանեփ լաւ կը բուսնի: Դարձեալ շարունակում է ուղիղ ճանապարհը: Հովիտը վերջրեց, հովտի ծայրում փոս փորեց, երկորդ անկիւնը կազմեց: Պահոմը յետ նայեց դէպի շխտանի կողմը, տափի շուրջը պտտել, մէջտեղն էր եկել. մի ինչ որ բան ճօճում էր օդում և թանձր

մառախուղի միջից հազիւ նշմարուում էին շիխանի մարդիկ:—  
 «Է՛, մտածում է Պահոմը, միւս հողմերը շատ երկար վերցրի,  
 այս հարկաւոր է մի քիչ կարճեցնել»: Երրորդ հողմը շարունակեց  
 անցնել, սկսեց քայլերն աւելացնել: Արեգակին նայեց—օրը կէս  
 է լինում, իսկ երրորդ հողմից ընդամէնը դեռ երկու վերստ էր  
 անցել: Եւ մինչև տեղը նոյն 15 վերստն էր:—Այ, մտածում է,  
 կալուածքս թէև ծուռն է լինում, բայց անհրաժեշտ է ուղիղ  
 անցնել: Աւելորդ հարկաւոր չէ վերցնել: Առանց այն էլ հողը  
 շատ է»: Պահոմը շտապով փոս արաւ, և ուղիղ քայլերով դէպի  
 շիխանը գիմեց:

Թ.

Պահոմը գնում է ուղիղ շիխանի վերայ, բայց սկսել էր  
 արդէն ծանրանալ: Քրտնքից ջուր էր կարուել, բոբիկ ոտները  
 քրքրուել էին ու ջարդուել, սկսել էին դանդաղել: Հան-  
 գըստանալ է ուղում: Բայց անկարող է, մինչև արևի մայր մտնելը  
 չէր հասնի: Չի սպասում արեգակը, անդադար իջնում ու իջնում  
 է:—«Ա՛խ, մտածում է, արդեօք չը սխալուեցի, շատ չը վերցրի»:   
 Հը՞. եթէ չը կարողանամ հասնել: Առջևում ընկած շիխանին  
 է նայում, արեգակին նայում. մինչև տեղը դեռ հեռու է, բայց  
 արեգակը մօտենում է մայր մանելուն:

Պահոմը գնում էր այդպիսով, դժուար զրութեան մէջ էր,  
 բայց անդադար աւելացնում ու աւելացնում էր քայլերը: Գնում  
 էր, գնում—բայց տեղը դեռ հեռու էր. սկսում է վազել: Բաճ-  
 կանակը մի հողմ է ձգում, շարտում է կոշիկները, դաւը. ձգում է  
 դիտարկը, բան է միայն պահում, որի վերայ և յենուում է:—«Ա՛խ,  
 մտածում է Պահոմը, աղահուլթիւն արիւն ամբողջ գործը փչացրի,  
 արևի մայր մտնելուց առաջ չեմ հասնի»: Եւ աւելի շնչասպառ  
 է լինում երկիւղից: Պահոմը վազում է, քրտնքից շապիկին ու  
 վարտիկը մարմ նին են կպչում, բերանը չորանում է: Կուրծքը  
 ուռչում է փուքսի նման, իսկ սիրտը խփում մրճի պէս. ոտ-  
 ները կարծես իրենը չը լինեն, ծալծլուում են: Պահոմի դժուարն  
 է դալիս, վախենում է չը տրաքուի յանկարծ սաստիկ լարու-  
 ծութիւնից:

Պահից վախենում է, բայց կանգնել չէ կարող: «Այսքան  
 տեղը վազեցի, մտածում է Պահոմը, իսկ այժմ կանգնել,—յիմա-

րի տեղ պիտի դնեն ինձ»: Վաղեց, վաղեց, մօտենում է արդէն և շուռւմ. բաշկիրցիք ճշում, հարայ են կանչում, և նոցա աղաղակից Պահոմի սիրան աւելի է ալեկոծում: Վերջին ուժերը հաւաքած, Պահոմը վազում է, իսկ արեգակն արդէն իւր մուտքին է մօտենում, մթութեան մէջ մանում. դարձել էր մի կարմիր, արնադոյն բան: Հա—հա մանելու վերայ է: Արեգակը մանելու մօտ է, բայց մինչև տեղ հասնելն էլ շատ հեռու չէր: Պահոմն արդէն տեսնում է, որ ժողովուրդը կանգնած է շիխանի վերայ, նրան ձեռքերով է անում. խրախուսում է: Գետնի վերայ ազուէսի փափախն է դրուած, նրա մէջ փողերը, իսկ գլխարկից ոչ հեռու տեսնում է տանուտէրին,—ինչպէս նա հողի վերայ նստել է և ձեռքերով փորը բռնել: Պահոմը երազը յիշեց:—«Հողը, մտածում է Պահոմը, շատ է, բայց կը տայ Աստուած, որ նորա վերայ ապրեմ: Օ՛խ, խորտակեցի ես իմ ձեռքով իմ կեանքը, մտածում է: Չեմ հասնի»:

Պահոմը արեգակին նայեց, բայց նա արդէն մօտեցել էր երկրին, արդէն մի ծայրը երկրի ետևն էր անցել և անկիւնով ուղիղ կտրուել: Պահոմը հաւաքեց իւր վերջին ուժերը, մարմինը առաջ ձգեց, ոտները հաղիւ հաղ գէմ էր տալիս, որ չընկնի: Պահոմը մօտենում է շիխանին, յանկարծ մթնկալում է: Նայում է, արեգակն արդէն մտել է: Պահոմը ծանր ախ քաշեց:—«Ասորան, մտածում է Պահոմը, իմ աշխատութիւններս»: Արդէն կամենում էր կանգ առնել, երբ լսում է, որ բաշկիրցիք անգադար շարունակում են հարայ կանչել, և յանկարծ միտքն է գալիս, որ ցածից նրան թուում է, թէ արեգակը մտել է, բայց շիխանից դեռ ոչ: Պահոմը հաւաքեց իւր վերջին շունչը բարձրացաւ շիխանի վերայ: Շիխանի վերայ դեռ լոյս էր: Պահոմը հեալով հասաւ, տեսնում է գլխարկը: Գլխարկի դիմաց նստել է տանուտէրը, կշկշում է և ձեռքերով փորը բռնում: Պահոմը երազը յիշեց, ախ քաշեց, ոտները դետնից կախ ընկան, և երեսի վերայ փռուեց Պահոմը գետին, ձեռքերը գլխարկին հասան:

— Այ կեցցե՛ն. աղաղակեց տանուտէրը: Տէր դարձար շատ հողերի:

Պահոմի ծառան մօտեցաւ, կամեցաւ տիրոջը գետնից կտրել տեսնում է, որ Պահոմի ղեբանից արիւն է հոսում, և մեռած պարկած է:

Ծառան բաճը վերցրեց, Պահոմի համար, որքան նրան գլխից մինչև ոտները պէտք էր—երեք արշին գերեզման փորեց, և Պահոմին թաղեց:

1. Տօլսուս

(Ռուս. քարզմ. վ.ր. Գահ. Տ. Մովսիսեան.)